ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳ ՀՈԼԼ ՍՊԸ-ի գույքերի կրկնաճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-10-15 15:04:25

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

2026թ. նոյեմբերի 04-ին, ժամը 16։00-ին ք.Երևան Ալ.Մանուկյան 10 շենք, 3 բնակարան հասցեում նշանակված է ԳՐԻԳ ՀՈԼԼ ՍՊԸ-ի պարտավորությունների համար Պարտապանի բռանգանձման ենթակա գույքային հաշվեկշռում անշարժ գույքերի աճուրդը հետևյալ հաջորդականությամբ
ԼՈՏ 1. ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիս քաղաք, 0.5577 հա մակերեսով 05-005-0426-0052 կադաստրային ծածկագրով վարելահողը՝ 660,885.21 ՀՀ դրամ, պարտապանի բաժնի արժեքը՝ 148,699.14 ՀՀ դրամ մեկնարկային գնով։
ԼՈՏ 2. ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք, ք Վարդենիս Հ Անդրեասյան փողոց, 6/8 հասցեում գտնվող 05-005-0060-0058 կադաստրային ծածկագրով բնակելի տունը ՝ 514,727.83 ՀՀ դրամ մեկնարկային գնով։
ԼՈՏ 3. ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք ք. Լեռանգործների փողոց 16/1 հողամաս հասցեում գտնվող 05-005-0141-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը՝ 137,260.93 ՀՀ դրամ մեկնարկային գնով։
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ 1.ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, 2.իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների դեպքում՝ դրանց պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենը, 3.աճուրդի մասնկացության և նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը. մասնակցության վճարը և նախավճարը կազմում են մեկնարկային գնի 1 և 5 տոկոսները համապատասխանաբար։ Մասնակցության վճարը և նախավճարը վճարվում է փոխանցումով՝ «Արդշինբանկ» ՓԲԸ բանկում բացված հատուկ հաշվեհամարին՝ 2474604597760000։ Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրվան նախորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ ընդհուպ մինչև հոկտեմբերի 27-ը ժամը 17:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան (ք.Երևան, Օտյան 53/2)։ Աճուրդում հաղթող մասնակից է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը։ Գույքի մասին այլ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար ցանկացողները կարող են զանգահարել սնանկության գործով կառավարիչ Մուշեղ Խաչիկյանին՝ 044-77-44-64

հեռախոսահամարով։

37444774464

snank.khachikyan@gmail.com

-Ք Երևան, Ալեք Մանուկյան 10 շ, 3 բն